ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԵՆԳԱՎԻԹ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ. ք. Երևան, Գ. Նժդեհի 26, փոստային դասիչ՝ 0026, հեռ. (+374 11) 518811, էլ. փոստ՝ shengavit@yerevan.am

«16» 02 2022 թ. № 22/01-3542

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԳՈՌ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 14.07.2021թ. կնքվել է ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-2 ծածկագրով աշխատանքների իրականացման գնման պայմանագիր, ըստ որի պետք է իրականացվեին Շենգավիթ և Կենտրոն վարչական շրջանների թեքահարթակների կառուցման աշխատանքները:

1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարած աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված եղել, Շենգավիթ վարչական շրջանի մասով, Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 60-րդ օրացույցային օրը ներառյալ:

«ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հրաժարվում է կատարել ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-2 պայմանագրով նախատեսված աշխատանքները, քանի որ առաջացել են չնախատեսված խոչընդոտներ: (ՀՀ ՊԵՏԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ կողմից դրվել է կալանք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՐՄԻՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի Շենգավիթ վարչական շրջանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն նշված չափաբաժնի մասով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՌԱԶՄԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Ֆինանսական բաժին
Կատ՝ Մ. Մանուկյան
Հեռ.011 518820